ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ
(1820–1907)

Հայ եկեղեցու 125–րդ կաթողիկոսը: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայր Վանում: Լիմ և Կտուց անապատներում գրաբար և հայագիտություն է ուսանել: Նրան մեծարել են Հայոց Հայրիկ պատվանունով: Թուրքական հալածանքների ժամանակ կորցրել է ընտանիքը, իսկ 1862թ. դարձել է Տարոնի Սբ Կարապետի առաջնորդ: Պոլսում Խրիմյանը հրատարակել է «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, որին աշխատակցում էին իր հիմնած Ժառանգավորաց դպրոցի սաները:

1878թ. Խրիմյան Հայրիկը ղեկավարել է Բեռլինի վեհաժողովի հայկական պատվիրակությունը: Թևավոր խոսք է դարձել նրա «Թղթե շերեփ» փոխաբերությունը:

Սահմանադրության տարեդարձին ժողովուրդը խուժել է Վարագա վանք, երբ Խրիմյանը վանահայր էր: Նա ձայնակցել է ժողովրդին և ողջունել նրա իրավունքը:

Նա հրատարակել է «Դրախտի ընտանիքը», «Պապիկ և թոռնիկ» և այլ գրքեր: